

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գևորգ Հովիկի Մարտիրոսյան

Հոդվածը ստացվել է՝ 12.10.23, ուղարկվել է գրախոսման՝ 10.11.23, երաշխավորվել է տպագրության՝ 07.12.23

Ներածություն: Հարկային բեռի մեծությունը ցույց է տալիս, թե ինչպես է պետության կողմից իրականացվող հարկաբյուջետային քաղաքականությունը իրեն դրսևորում եկամուտների հավաքագրման և ներդրումային միջավայրի տեսանկյունից:

Զարգացած երկրներում հարկերի հավաքագրման կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունի եկամտահարկի տեսքով գոյացող հարկերը, իսկ զարգացող երկրներում ավելի շատ նախապատվություն է տրվում առևտրային ոլորտից գանձվող հարկերին: Դրանով է պայմանավորված նաև այն, որ հարկային բեռի մակարդակը զարգացած երկրներում ունի ավելի բարձր մակարդակ, քան զարգացող երկրներում, ինչն էլ հանդիսանում է այն կարևոր պատճառներից մեկը, որ վերջին տասնամյակի ընթացքում զարգացող երկրները ավելի գրավիչ են դառնում օտարերկրյա ներդրումների համար:

Հոդվածը **արդիական** է այնքանով, որ պետության կողմից 2025թ.-ի հունվարի 1-ից գյուղատնտեսության ոլորտի վրա մեծանալու է հարկային բեռի մակարդակը, որի ոչ ճիշտ կարգավորումը կազդի երկրի գյուղատնտեսական միջավայրի և այդ ոլորտի ներդրումային քաղաքականության վրա: Հոդվածի **նպատակն** է ՀՀ-ում հարկային բեռին վերաբերող օրենսդրական փոփոխությունները ծառայեցնել ճյուղի զարգացման հեռանկարներին և ներդրումային քաղաքականությանը: Այդ նպատակի իրականացման համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**. ուսումնասիրել ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման ընթացքը ու զարգացման հեռանկարները, և առաջարկել ՀՀ-ում գյուղատնտեսական գործունեության արդյունքների հարկման դրույքաչափեր:

Գրականության վերլուծություն: Եվրոպական զարգացած որոշ երկրներում գյուղատնտեսական գործունեությունից ստացվող արդյունքները հարկվում են եկամտահարկի միջոցով, որը վերաբերում է հողի սեփականության և դրա մշակման արդյունքում ստացված արդյունքներին: Այսինքն՝ հարկվում է համախառն եկամուտը, բացառությամբ՝ դրանց ստացման համար կատարված ծախսերի: Սույն հարկատեսակը համեմատաբար հեշտ է կիրառել, սակայն անհրաժեշտ է հաճվի առնել թե՛ ֆերմերները շահույթ են ստանում իրենց գործունեությունից, թե՛ ոչ¹: Օրինակ՝ Լեհաստանում գյուղատնտեսության համար գոր-

¹ Joanna Pawlowska-Tysko, Michal Soliwoda, “Agricultural Farm Income and competitiveness of the tax and insurance systems”, Warsaw, 2014, p. 10.

ծում է արտոնյալ հարկային համակարգ, որն ուղղված է այս ոլորտում հարկային բեռի նվազեցմանը: Ֆերմերների եկամուտները չեն հարկվում եկամտահարկի ընդհանուր համակարգի համաձայն, ընդ որում ֆերմերների 95%-ը ազատվում է եկամտահարկից, որը հաշվարկվում է կա՛մ արտադրության միջին նորմերի, կա՛մ փաստացի ծախսերի հիման վրա¹:

Տ. Հարությունյանի կողմից կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ գյուղատնտեսական ոլորտի բարձր մասնաբաժինը շատ անցումային երկրներում հնարավորություն չի տվել կուտակել եկամուտների բավարար մակարդակ ավելի արդյունաբերական երկրների համեմատ: Բացի այդ, եկամտաբերության և արտադրության ծավալների նվազեցումը դժվարացնում է արդյունավետ հարկային համակարգի կառուցման խնդիրը²: Այս խնդիրները ՀՀ գյուղատնտեսության ոլորտում են առկա են մինչև այժմ: Ուստի պետությունը այս ոլորտում հարկային գործիքակազմ կիրառելուց զատ պետք է իրականացնի նաև պետական աջակցության միջոցառումներ: Ս. Ավետիսյանը և Լ. Խաչատրյանը նշում են, որ այս ոլորտը բարձր ռիսկային է, ուստի պարենային անվտանգության ապահովման համար կարևոր է բնական աղետների կանխարգելման միջոցառումների իրականացումը, ինչը հնարավոր է պետական աջակցության շնորհիվ³:

Լ. Հակոբյանի կողմից կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ գյուղատնտեսական գործունեությունից ստացվող եկամուտներից հարկերի հավաքագրման աշխատանքների ծավալները աճելու են, ուստի առաջարկում է տեղական ինքնակառավարման մարմիններին կից ստեղծել տնտեսաշվարկային մասնագիտական ծառայությունների իրականացնող մարմին, որի գործունեությունը սկզբնական փուլում կֆինանսավորվի պետական միջոցների հաշվին՝ նպաստելով դրանց կայացմանը⁴:

Գյուղատնտեսության ոլորտում հարկման անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելու համար կարելի է հետևել Ա. Բայադյանի կողմից ՀՀ գյուղատնտեսության ոլորտում իրականացրած ուսումնասիրությանը, որի շրջանակներում նույնպես առաջարկվել է խթանել այս ոլորտում առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը, պետության անմիջական միջամտությունը որպես վերահսկող մարմին, արտոնյալ պայմաններով վարկերի տրամադրումը և արտադրող-գնորդ

¹ OECD, "Taxation in Agriculture", OECD Publishing, Paris, 2020, p. 224.

² Հարությունյան Տ. Վ., «Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 268:32

³ Ավետիսյան Ս., Խաչատրյան Լ., «ՀՀ գյուղատնտեսության ներկա վիճակը և բարելավման հնարավորությունները», Զարգացման ժամանակակից մարտահրավերներ, Գիտաժողովի նյութեր, ՀՊՏՀ, Երևան, Տնտեսագետ, 2015, էջ 20:

⁴ Հակոբյան Լ., «Հայաստանի Հանրապետության ագրարային աշխատանքի էկոնոմիկա», Երևան, Լիմուշ, 2014, էջեր 204-205:

համագործակցային ինտեգրացիոն հարաբերությունների ձևավորումը¹: Վերջինս իրենից ներկայացնում է կազմակերպությունների միջև առկա հարաբերությունները՝ կապված բոլոր ձևերի կոոպերատիվ ինտեգրացիոն կառույցների ստեղծման և դրանց արդյունավետ գործունեության հաստատման հետ՝ տարբեր տեսակի ապրանքներ արտադրելու, հումք մշակելու և արտադրանքի խթանման տեխնոլոգիական շղթաներում վերջնական ապրանքներ ստանալու նպատակով²:

Մեթոդաբանություն: Հոդվածում առաջադրված խնդիրները իրենց լուծումներն են ստացել տվյալների նկարագրության, հավաքագրման, համեմատման և վերլուծական մեթոդների օգնությամբ:

Վերլուծություն: Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ գյուղատնտեսությունն ունի ռազմավարական նշանակություն պարենային ինքնաբավության խնդիրների հետ կապված:




Գծապատկեր 1. ՀՆԱ կառուցվածքի դինամիկան (%)³

2012-2021թթ.-ների ընթացքում ՀՆԱ-ում գյուղատնտեսական արտադրանքի տեսակարար կշիռը հարաբերական առումով նվազել է, իսկ բացարձակ ցուցանիշներով դիտարկելու պարագայում աճ են գրանցել և՛ գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը, և՛ ՀՆԱ-ն: Նվազումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ ՀՆԱ աճի տեմպը դիտարկվող ժամանակահատվածում ավելի բարձր է եղել գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի աճի տեմպից:

¹ Բայադյան Ա., «ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013, էջ 96:


² Ермалинская Н. В., Кожевников Е. А., “Кооперация в агропромышленном комплексе”, учебное пособие, Электронный аналог печатного издания, Гомель, 2016, с. 13-14.

³ «ՀՀ տնտեսական աճի կառուցվածքի վերլուծություն (հեռանկարային զարգացման համատեքստում)», Երևան, Լույս հրատարակչություն, 2023, էջ 7:



Գծապատկեր 2. Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների տարածություններ (հազար հեկտար)¹


Եթե ուշադրություն ենք դարձնում գծապատկեր 1-ում առկա տվյալներին, ապա ակնհայտ երևում է, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքը դրամական արտահայտությամբ աճել է, մինչդեռ ըստ գծապատկեր 2-ի գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների մշակման զծով 2004-2022թթ.-ներին գյուղատնտեսական արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ ցանքատարածությունների օգտագործման ծավալները նվազման միտում են ունեցել:



Գծապատկեր 3. Հացահատիկային և հատիկաբնդեղենային մշակաբույսերի ցանքատարածություններ, միջին բերքատվություն և համախառն բերք¹

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ օգտվելով «Պարենային ապահովություն և աղքատություն» հրապարակման «Պարենի առկայություն» բաժնի 2004-2022թթ.-ների տվյալներից, ԱՎԾ, Երևան:

Գծապատկեր 3-ում առկա տվյալներից պարզ է դառնում, որ դիտարկվող ժամանակահատվածում ցանքատարածությունների օգտագործվող մակերեսը աստիճանաբար նվազել է, ինչն էլ հանգեցրել է համախառն բերքի ծավալի նվազեցմանը: Մինչև 2016թ. ՀՀ-ում թե՛ հացահատիկային մշակաբույսերի մշակման ծավալները, թե՛ ներմուծման ծավալները աճել են, իսկ 2017թ.-ից սկսած մշակման ծավալները նվազել են, և շարունակել են աճել միայն ներմուծման ծավալները: Էկոնոմիկայի նախարարության ներկայացրած հաշվարկներով ցորենի ինքնաբավության մակարդակը 2021թ.-ին կազմել 23.2%², ինչը համեմատած 2015-2016թթ.-ների նույն ցուցանիշի հետ նվազել էրկու անգամ (2015թ.՝ 50.9%, 2016թ.՝ 53.2%)³:



Գծապատկեր 4. Խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը (հազար գլուխ)⁴

Գծապատկերներ 2-ում, 3-ում և 4-ում ներկայացված տվյալները փաստում են, որ ՀՀ գյուղատնտեսության զարգացման տեմպերը նվազել են առկա անհրաժեշտ ռեսուրսների և հնարավորությունների պայմաններում:

Ոլորտի խթանման համար ՀՀ կառավարությունը վերջին տարիներին վարում է ակտիվ ներդրումային քաղաքականություն: Մեր կարծիքով միաժամանակ անհրաժեշտ է նաև իրականացնել այդ գործընթացների նկատմամբ պետական մարմինների խիստ վերահսկողություն՝ առկա ցանքատարածությունների նպատակային օգտագործման և անասունների գլխաքանակի կառավարման նպատակով:

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ օգտվելով «Պարենային ապահովություն և աղքատություն» հրապարակման «Պարենի առկայություն» բաժնի 2004-2022թթ.-ների տվյալներից, ԱՎԾ, Երևան:

² «Պարենային ապահովություն և աղքատություն, 2022թ. հունվար-դեկտեմբեր», ԱՎԾ, Երևան, 2022թ., էջ 74:

³ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջ:

⁴ Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ օգտվելով «Հայաստանի Վիճակագրական տարեգիրք»-ի «Գյուղատնտեսություն» բաժնի 2004-2023թթ.-ների տվյալներից, ԱՎԾ, Երևան:

Գյուղացիական համայնքների մեծ մասում եկամտի հիմնական աղբյուրը կա՛մ գյուղատնտեսական գործունեությունից, կա՛մ արտագնա աշխատանքից ստացվող եկամուտն է: Եթե 2025թ.-ի հունվարի 1-ից սկսած գյուղատնտեսական գործունեությունից ստացվող եկամուտը հարկվի, ապա դա լուրջ ֆինանսական ծանրաբեռնվածություն կարող է առաջացնել այնքան ոչ բարվոք վիճակում գտնվող գյուղացիական ազգաբնակչության վրա և շրթայական սկզբունքով իր ազդեցությունը կյոռոնի գյուղատնտեսական արտադրանքների գների բարձրացման վրա:

Ըստ վիճակագրական կոմիտեի հրապարակած տվյալների՝ գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն գործունեության տեսակների բնագավառում միջին ամսական անվանական աշխատավարձը 2012-2021թթ.-ների ընթացքում փոփոխվել է 100 879 դրամից 140 362 դրամի սահմաններում¹, որն էական փոփոխություն չի ունեցել ազգաբնակչության բարեկեցության բարելավման տեսանկյունից, առավել ևս եթե հաշվի առնենք դրամի արժեզրկման տեմպը:

Գյուղատնտեսության զարգացման համար վերջին մի քանի տասնամյակում որոշ շրջաններում առկա է ոռոգման ջրի բացակայության խնդիր: Պետությունը նպատակ ունի տարբեր մարզերում կառուցելու ջրամբարներ, որը նույնպես հնարավորություն կտա խթանելու գյուղատնտեսության զարգացումը: Խոսքը 22 փոքր ջրամբարների կառուցման մասին է Գեղարքունիքի, Շիրակի, Վայոց ձորի, Արագածոտնի, Արմավիրի և Կոտայքի մարզերում²: Օրինակ՝ Կապսի ջրամբարի կառուցումը թույլ կտա բարձրացնել Շիրակի մայր և Ախուրյանի աջափնյա շուրջ 17000 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, ինչպես նաև հնարավորություն կստեղծվի 2280 հա հողատարածքների մեխանիկական ոռոգումը փոխարինել ինքնահոս ոռոգման եղանակի՝ տարեկան խնայելով 1.3 մլն. կվտ/ժամ էլեկտրաէներգիա³: Նման ներդրումների իրականացումը կարող է շահագրգռել ազգաբնակչությանը զբաղվելու գյուղատնտեսական գործունեությամբ:

ՀՀ գյուղատնտեսության զարգացման վրա մեծ ազդեցություն է թողնում նաև վառելիքի, սերմացուի, գյուղատնտեսական աշխատանքների իրականացնելու համար անհրաժեշտ գյուղտեխնիկայի բացակայությունը կամ դրա մաշված վիճակը և բնակլիմայական փոփոխությունների ազդեցությունը: 2022թ.-ի հունվար-դեկտեմբերին 2021թ.-ի հունվար-դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են համապատասխանաբար 11.5% և 37.1%-ով: Նման տատանումները առավել ակներև դառնում են հատկապես գյուղատնտեսական աշխատանքների իրականացման ժամանակահատվածում: Պետական մարմին-

¹ «Հայաստանի Վիճակագրական տարեգիրք»-ի «Կենսամակարդակ» բաժնի 2012-2022թթ.-ների տվյալներ, ԱՎԾ, Երևան:

² Աղբյուրը՝ <https://armenpress.am/arm/news/967635.html>:

³ Աղբյուրը՝ <https://mtad.am/news/1431>:

ների կողմից չկան լծակներ և գործիքներ գյուղատնտեսական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ վառելիքի գները կարգավորելու համար:

Ներկայում շատ կարևոր խնդիր է հանդիսանում ժամանակակից գյուղտեխնիկայի բացակայությունը և դրա թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես մաշված լինելու հանգամանքը: Խնդիրը առկա է ՀՀ գրեթե բոլոր գյուղացիական համայնքներում, առկա է նաև ժամանակակից գյուղտեխնիկայի անհամաչափ բաշխվածության հիմնախնդիրը: Պետական սուբսիդավորմամբ տեղական համայնքները կարող են իրականացնել ժամանակակից գյուղտեխնիկայի ձեռքբերում, որը կնվազեցնի նաև բնական կորուստների մակարդակը, որն առկա է հին գյուղտեխնիկայի օգտագործման պարագայում: Իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ 2022թ.-ի դրությամբ գյուղացիների 68.3%-ը համաձայն է գյուղատնտեսական տեխնիկայի կոլեկտիվացմանը¹: Ինչ առավելություններ կարող է այն տալ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողներին.

- կխոչընդոտի համայնքներում գյուղտեխնիկայի սեփականատերերի կողմից ներքին համաձայնությամբ գյուղացիական աշխատանքների իրականացման գների բարձրացմանը,
- բերքի հավաքման ժամանակ կորուստների կրճատմանը,
- կաճեն անասնապահությունից ստացվող արտադրանքի իրացման ծավալները՝ հանգեցնելով նաև դրանց շուկայական գների կարգավորմանը:

Պետական մակարդակով հայրենական արտադրանքի թողարկման և վաճառքի խրախուսող քաղաքականության առումով.

1. առաջարկում ենք, որ սպանդանոցները անասունների մորթը իրականացնելուց զատ նաև իրենց վրա վերցնեն ստացվող արտադրանքի վաճառքի իրականացման պարտականությունը, որը կհեշտացնի ոչ միայն գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվողների հոգսերը, այլ նաև կապահովի ստացվող արտադրանքի որակական հատկանիշների նկատմամբ սանիտարական վերահսկողություն,
2. անհրաժեշտ է վարելահողերի մշակումն իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինների վերահսկողության ներքո, որպեսզի հացահատիկային մշակաբույսերի մշակման համար նախատեսված վարելահողերը կարողանան վերականգնել իրենց որակական հատկանիշները: Բացի այդ, պետությունը կարող է ամեն տարի գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ սուբսիդավորել վառելիքի ու սերմացուի ձեռքբերումը կամ էլ իրականացնել վառելիքի ու որակյալ սերմացուի ձեռք բերում և պահեստավորում այն ժամանակահատվածում, երբ դրանց շուկայական գները ամենացածրն է տարվա ընթացքում,
3. պետությունը կարող է դժվարին սոցիալական պայմաններում գտնվող գյուղացիական համայնքներում կամավորության սկզբունքով իրականացնել կո-

¹ «Գյուղականության ճգնաժամը Հայաստանում», Friedrich Ebert Stiftung հրատարակչություն, Երևան, 2022, էջ 124:

լեկտիվ տնտեսությունների հիմնում, որը կնպաստի որոշ գյուղացիների վարելահողերի միավորմանը, աշխատանքային արտադրողականության բարձրացմանը և գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերմանը առավել նպատակահարմար պայմաններով: Նշվածը նպատակահարմար է նաև այն տեսանկյունից, որ ներկայումս գյուղական համայնքներից նկատվում է մարդկանց տեղաշարժ դեպի քաղաքային բնակավայրեր:

Այսպիսի բարդ տնտեսական իրավիճակում պետությունը պետք է խթանի գյուղատնտեսության զարգացումը, այլ ոչ թե ծանրաբեռնի ոլորտի զարգացումը հարկային բեռի մեծացմամբ: Այդպիսի հարկային համակարգի ներդրումը առաջարկում ենք.

- հետաձգել գյուղատնտեսական գործունեությամբ զբաղված ազգաբնակչության միջոցով հարկային բեռի ավելացման գործընթացը,
 - հարկային բեռի ավելացումը իրականացնել քայլերի հետևյալ հաջորդականությամբ՝
1. տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պետք է իրականացվի հողի ներկայիս վիճակի ուսումնասիրություն՝ ըստ հողերի բերրիության ու բերքատվության աստիճանի, ոռոգման պայմանների հասանելիության և դրանց մշակելու հարմարավետության աստիճանի, անհրաժեշտ բերք ստանալու համար գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց կողմից իրականացվող ծախսերի մասին իրական պատկերը ստանալու համար: Այդ նպատակով մենք ներկայացրել ենք ցորենի մշակման համար պահանջվող ծախսերի միջինացված հաշվարկ՝ ելնելով Արմավիրի մարզում իրականացված հարցումներից.

Աղյուսակ 1

Ցորենի մշակման անհրաժեշտ ծախսերը 1 հեկտար վարելահողի մշակման համար

Ցորենի մշակման համար նախատեսված գյուղատնտեսական աշխատանքները	1 հեկտար վարելահողի մշակման հետ կապված ծախսերի արժեքը(դրամ)
Հողի վարման աշխատանքներ	25 000
Հողի կուլտիվացիոն և ցորեն ցանելու հետ կապված աշխատանքներ	30 000
Վարելահողի ոռոգում 2 անգամ	30 000
Պարարտացում՝ 250 կգ	50 000
Բերքահավաք	25 000
Ընդամենը	160 000
Հավաքված բերքից ստացվող եկամուտ (1կգ-ի գինը 120 դրամ)¹ 2.5 տոննա¹	300 000

¹ Տվյալների համար հիմք է ընդունվել Արմավիրի մարզում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվածներից իրականացված հարցումների արդյունքները:

2. Ելնելով աղյուսակ 1-ում ներկայացված 1 հեկտար հողատարածքի համար ցորենի մշակման համար անհրաժեշտ ծախսերի հաշվարկից՝ առաջարկում ենք գյուղատնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների հարկման նպատակով սահմանել հետևյալ դրույքաչափերը.

Աղյուսակ 2

Առաջարկվող հարկային դրույքաչափեր գյուղատնտեսական գործունեությունից ստացվող եկամուտների հարկման նպատակով

Մշակվող վարելահողերի մակերեսը (հեկտարներով)	Հարկման դրույքաչափը
Մինչև 2 հեկտար մակերես ունեցող վարելահողերի համար	0%
2-10 հեկտար մակերես ունեցող վարելահողերի համար	10%
10-20 հեկտար մակերես ունեցող վարելահողերի համար	20%
20 և ավելի հեկտար մակերես ունեցող վարելահողերի համար	30%

Վերը ներկայացված վերլուծությունում ցորենի մշակման համար անհրաժեշտ ծախսերի և դրանից ստացվող եկամուտների հաշվարկում հաշվի է առնվել այն լավագույն սցենարը, որը կարող է լինել հաջող բնակլիմայական պայմանների պարագայում, իհարկե այն տարբեր մարզերի համար կարող է ունենալ տարբեր արդյունքներ: Այս նույն պատկերը կարող ենք արձանագրել նաև գյուղատնտեսական այլ գործունեության տեսակներից ստացվող արդյունքների համար:

Ելնելով վերը իրականացված հաշվարկներից կարելի է եզրակացնել, որ գյուղատնտեսական գործունեության նկատմամբ հարկային բեռի ավելացման գործընթացը պետք է ունենա խորը հիմնավորումներ:

Գիտական նորույթ: Հնդվածում իրականացված հետազոտությունը փաստում է այն մասին, որ ՀՀ գյուղատնտեսությունը, ներկայումս գյուղական համայնքներում ապրող ազգաբնակչության համար, հանդիսանալով գոյատևման հիմնական աղբյուր, դեռ չունի պետության կողմից որպես բիզնես գործունեության ոլորտը զարգացնելու և դրա առանձնահատկություններին համապատասխան հարկային քաղաքականություն կիրառելու համար անհրաժեշտ բազա և նախադրյալներ:

Եզրակացություն: Ուսումնասիրելով ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման ընթացքը և ապագա հեռանկարները՝ մեր կողմից կատարվել են ինչպես գյուղատնտեսության զարգացման հետ կապված, այնպես էլ ՀՀ-ում գյուղատնտեսական գործունեության հարկման գործընթացի կազմակերպման հետ կապված առաջարկություններ:

- հետաձգել գյուղատնտեսական գործունեության հարկման գործընթացը մինչ 2030թ. և մինչ այդ պետական մակարդակով իրականացնել ակտիվ ներդրումային քաղաքականություն վերը ներկայացված քայլերի հիման վրա,
- իրականացնել հարկային համակարգի ներդրում վերը ներկայացված հարկման դրույքաչափերի միջոցով՝ դրա համար հիմք ընդունելով գյուղա-

տնտեսական գործունեությամբ զբաղված ազգաբնակչության կողմից իրականացված ծախսերը և ստացված եկամուտները,

- ֆերմերային տնտեսությունների կամ կամավորության սկզբունքով կոլեկտիվ տնտեսությունների ձևավորումը կխթանի ոչ միայն գյուղատնտեսության զարգացումը, այլ նաև կնպաստի հարկերի հավաքագրման գործընթացի ավելի արագ կազմակերպմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Ս., Խաչատրյան Լ., «ՀՀ գյուղատնտեսության ներկա վիճակը և բարելավման հնարավորությունները», Զարգացման ժամանակակից մարտահրավերներ, Գիտաժողովի նյութեր, ՀՊՏՀ, Երևան, Տնտեսագետ, 2015, 536 էջ:
2. Բայադյան Ա., «ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2013, 144 էջ:
3. «Գյուղականության ճգնաժամը Հայաստանում», Friedrich Ebert Stiftung հրատարակչություն, Երևան, 2022, 154 էջ: Աղբյուրը՝ <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/19277.pdf>:
4. Հակոբյան Լ., «Հայաստանի Հանրապետության ագրարային աշխատանքի էկոնոմիկա», Երևան, Լիմուշ, 2014, 342 էջ:
5. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջ:
6. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք»-ի «Գյուղատնտեսություն» բաժնի 2004-2023թթ.-ների տվյալներ, ԱՎԾ, Երևան:
7. «Հայաստանի վիճակագրական տարեգիրք»-ի «Կենսամակարդակ» բաժնի 2012-2022թթ.-ների տվյալներ, ԱՎԾ, Երևան:
8. Հարությունյան Տ. Վ., «Հարկային քաղաքականության և հարկային վարչարարության կատարելագործման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 333 էջ:
9. «Պարենային ապահովություն և աղքատություն, 2022թ. հունվար-դեկտեմբեր», ԱՎԾ, Երևան, 2022թ., էջ 74:
10. «Պարենային ապահովություն և աղքատություն» հրապարակման «Պարենի առկայություն» բաժնի 2004-2022թթ.-ների տվյալներ, ԱՎԾ, Երևան:
11. «ՀՀ տնտեսական աճի կառուցվածքի վերլուծություն (հեռանկարային զարգացման համատեքստում)», Լույս հրատարակչություն, Երևան, 2023, 34 էջ:
12. Ермалинская Н. В., Кожевников Е. А., “Кооперация в агропромышленном комплексе”, учебное пособие, Электронный аналог печатного издания, Гомель, 2016, 191 с. Источник: <https://core.ac.uk/download/pdf/212968583.pdf>:
13. Joanna Pawlowska-Tyszk, Michal Soliwoda, “Agricultural Farm Income and competitiveness of the tax and insurance systems”, Warsaw, 2014, 115 p. Source: <https://depot.ceon.pl/bitstream/handle/123456789/7871/121.1.pdf?sequence=1>:
14. OECD, “Taxation in Agriculture”, OECD Publishing, Paris, 2020, 262 p. Source: <file:///C:/Users/NASIE/Downloads/TaxationinAgriculture.pdf>:

15. <https://armenpress.am/arm/news/967635.html>:
16. <https://mtad.am/news/1431>:

References

1. Avetisyan S., Xachatryan L., «HH gyowghatntesowt'yan nerka vitwaky' & barelavman hnaravorowt'yownnery'», Zargacman jhamanakakic martahraverner, Gitajhoghovi nyowt'er, HPTH, Er&an, Tntesaget, 2015, 536 e'j:
2. Bayadyan A., «HH gyowghatntesakan artadrowt'yan zargacman himnaxndirneri' & dranc lowc'man owghinery'», Er&an, HH GAA «Gitowt'yown» hratarakchowt'yown, 2013, 144 e'j:
3. «Gyowghakanowt'yan twgnajhamy' Hayastanowm», Friedrich Ebert Stiftung hratarakchowt'yown, Er&an, 2022, 154 e'j: Aghbyowry' <https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/19277.pdf>:
4. Hakobyan L., «Hayastani Hanrapetowt'yan agrarain ashxatanqi e'konomika», Er&an, Limowsh, 2014, 342 e'j:
5. Hayastani Hanrapetowt'yan gyowghatntesowt'yan naxararowt'yan pashtonakan kayqe'j:
6. «Hayastani vitwakagrakan taregirq»-i «Gyowghatntesowt'yown» bajhni 2004-2023t't'.-neri tvyalner, AVC', Er&an:
7. «Hayastani Vitwakagrakan taregirq»-i «Kensamakardak» bajhni 2012-2022t't'.-neri tvyalner, AVC', Er&an:
8. Harowt'yownyan T. V., «Harkayin qaghaqakanowt'yan & harkayin varchararowt'yan katarlagorc'man himnaxndirneri' Hayastani Hanrapetowt'yownowm», Er&an, HH GAA «Gitowt'yown» hrat., 2016, 333 e'j:
9. «Parenayin apahovowt'yown & aghqatowt'yown, 2022t'. hownvar-dektember», AVC', Er&an, 2022t'., e'j 74:
10. «Parenayin apahovowt'yown & aghqatowt'yown» hraparakman «Pareni ar'kayowt'yown» bajhni 2004-2022t't'.-neri tvyalner, AVC', Er&an:
11. «HH tntesakan atwi kar'owcvac'qi verlowc'owt'yown (her'ankarayin zargacman hamateqstowm)», Lowys hratarakchowt'yown, Er&an, 2023, 34 e'j:
12. Ermalinskaja N. V., Kozhevnikov E. A., “Kooperacija v agropromyshlennom komplekse”, uchebnoe posobie, Jelektronnyj analog pechatnogo izdanija, Gomel', 2016, 191 s. Istochnik: <https://core.ac.uk/download/pdf/212968583.pdf>:
13. Joanna Pawlowska-Tyszk, Michal Soliwoda, “Agricultural Farm Income and competitiveness of the tax and insurance systems”, Warsaw, 2014, 115 p. Source: <https://depot.ceon.pl/bitstream/handle/123456789/7871/121.1.pdf?sequence=1>:
14. OECD, “Taxation in Agriculture”, OECD Publishing, Paris, 2020, 262 p. Source: <file:///C:/Users/NASIE/Downloads/TaxationinAgriculture.pdf>:
15. <https://armenpress.am/arm/news/967635.html>:
16. <https://mtad.am/news/1431>:

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԿՐՃԱՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Գևորգ Հովհիկի Մարտիրոսյան

Համառոտագիր: Գյուղատնտեսությունը հանդիսանում է պետության ազգաբնակչության ինքնաբավության հետ կապված խնդիրների լուծումը ապահովող տնտեսության միակ ճյուղը: ՀՀ-ում գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող ազգաբնակչության նկատմամբ հարկերի հավաքագրման գործընթացը պետք է իրականացվի 2025թ.-ի հունվարի 1-ից, բայց թե պետության կողմից ինչ սկզբունքներով և գործիքակազմով պետք է իրականացվի, այս գործընթացը դեռևս հայտնի չէ:

Տնտեսության այս ճյուղը ՀՀ-ում դեռևս ունի մի շարք խնդիրներ, որոնք իրենց լուծումները չեն ստացել, որոնց մենք անդրադարձել ենք հոդվածի շրջանակներում: ՀՀ-ում առկա են գյուղատնտեսության զարգացման հնարավորություններ և հեռանկարներ, որին կարելի է հասնել պետական վերահսկողության ու ազգաբնակչության պատասխանատու վերաբերմունքի արդյունքում:

Հոդվածը **արդիական** է, քանի որ 2025թ.-ի հունվարի 1-ից ՀՀ գյուղատնտեսական գործունեության արդյունքների վրա հարկային բեռի ավելացումը կարող է ազդել այդ ոլորտի զրավչության վրա: Հոդվածի **նպատակն** է ՀՀ-ում հարկային բեռին վերաբերող օրենսդրական փոփոխությունները ծառայեցնել ճյուղի զարգացման հեռանկարներին և ներդրումային քաղաքականությանը: Այդ նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները**. ուսումնասիրել ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման ընթացքը ու զարգացման հեռանկարները և առաջարկել ՀՀ-ում գյուղատնտեսական գործունեության արդյունքների հարկման դրույքաչափեր: Այս խնդիրները լուծման համար կիրառվել է հետևյալ **մեթոդաբանությունը** տվյալների նկարագրության, հավաքագրման, համեմատման և վերլուծական **մեթոդների** օգնությամբ:

Հետազոտության արդյունքում ստացված **գիտական նորույթը** փաստում է ՀՀ-ում ազգաբնակչության մոտ գյուղատնտեսությամբ զբաղվելու հետաքրքրության նվազեցման և նրանց գոյատևման հիմնական աղբյուր հանդիսանալու մասին, որն էլ խոսում է պետության կողմից այս ոլորտը որպես բիզնես գործունեության օղակ հարկման համար անհրաժեշտ բազա և նախադրյալներ չունենալու մասին:

Հոդվածում անդրադարձ է կատարվել ոլորտի զարգացումը բնութագրող մի շարք ցուցանիշների վերջին երկու տասնամյակի կտրվածքով և այդ ամենի հիման վրա առաջարկվել է ոլորտի զարգացումը խթանելու քայլերի հաջորդակա-նություն ու ոլորտի վրա հարկային բեռի բաշխումը իրականացնելու մեխանիզմ:

Բանալի բառեր. գյուղատնտեսություն, հարկային բեռ, ներդրումային քաղաքականություն, հարկային դրույքաչափ, պարենային ինքնաբավություն, հացա-

հատիկային մշակաբույսերի մշակում, վարելահողերի նպատակային օգտագործում, պետական վերահսկողություն:

НЕОБХОДИМОСТЬ СНИЖЕНИЯ НАЛОГОВОЙ НАГРУЗКИ НА СЕЛЬСКОХОЗЯЙСТВЕННЫЙ СЕКТОР РА

Геворг Овикович Мартиросян

Аннотация. Сельское хозяйство является единственной отраслью экономики, обеспечивающей решение проблем, связанных с самообеспечением населения государства. Процесс сбора налогов для населения, занимающегося сельскохозяйственной деятельностью в РА, должен быть реализован с 1 января 2025 года, однако принципы и инструменты, используемые государством для реализации этого процесса, пока неизвестны. В этой отрасли экономики РА до сих пор существует ряд не получивших своего решения проблем, которые мы рассмотрели в рамках статьи. В РА существуют возможности и перспективы развития сельского хозяйства, которых можно достичь в результате государственного контроля и ответственного отношения населения.

Статья **актуальна** тем, что увеличение налоговой нагрузки на результаты сельскохозяйственной деятельности в Республике Армения с 1 января 2025 года может повлиять на привлекательность этой отрасли. Цель статьи – сделать так, чтобы законодательные изменения, связанные с налоговым бременем в РА, служили перспективам развития отрасли и инвестиционной политики. Для достижения этой цели были поставлены следующие задачи: изучить процесс развития и перспективы развития сельского хозяйства в Республике Армения и предложить ставки налогообложения результатов сельскохозяйственной деятельности в Республике Армения. Для решения этих проблем была применены **методы** описания, сбора, сравнения и анализа данных.

Полученная в результате исследования **научная новизна** документирует снижение интереса населения страны к сельскому хозяйству и его роли основного источника его выживания, что говорит об отсутствии у государства необходимой базы и предпосылок для налогообложения этой отрасли как звено деловой активности.

В статье рассмотрен ряд показателей, характеризующих развитие отрасли за последние два десятилетия, и на основе всего этого определена последовательность шагов по стимулированию развития отрасли и механизм распределения налоговой нагрузки на отрасль.

Ключевые слова: сельское хозяйство, налоговое бремя, инвестиционная политика, налоговая ставка, продовольственное самообеспечение, выращивание зерновых, целевое использование пашни, государственный контроль.

THE NEED OF REDUCTION OF TAX BURDEN IN RA AGRICULTURE SECTOR

Gevorg Hovik Martirosyan

Abstract. Agriculture is the only sector of the economy that provides solutions to problems related to the food self-sufficiency of the population. The process of collecting taxes from the citizens engaged in agriculture activities in RA should be implemented from January 1, 2025, but the principles and tools of the implementation are not yet known. This sector of the RA economy still has several development issues that have not received their solutions, and which were addressed in the framework of this article. There are opportunities and prospects for the development of agriculture in RA, which can be achieved as a result of state regulation and the responsible attitude of the population. The **relevance of the article lies in the fact that** the increase in the tax burden on the output of agriculture production in the RA may negatively affect the attractiveness of that sector. The main goal of the article is to propose legislative changes related to the tax burden in RA that serve the development prospects of the sector and the investment policy. To achieve that goal, the following tasks were set: to study the development process and development prospects of agriculture in the RA and propose rates of taxation of the outputs of agriculture production. The goal of the article was achieved with the help of data description, collection, comparison and analytical **methods**.

The scientific novelty of the research documents the reduction of the interest of the population in agriculture as an economic activity. This fact proves that the state does not have the necessary base and prerequisites for taxing this sector as a link of business activity. The article explored a number of indicators characterizing the development of the sector over the past two decades, and based on the results, a sequence of steps to promote the development of the sector and a mechanism of distribution of the tax burden on the sector was proposed.

Keywords: agriculture, tax burden, investment policy, tax rate, food self-sufficiency, cultivation of cereals, purposeful use of arable land, state control.